ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

2014

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը
և
Հայաստանի Հանրապետության Կառավարությունը,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը սույն Համաձայնագրի հիմքն է կազմում,

նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը,

հղում կատարելով 2014թ. սեպտեմբերի 17-ին կայացած միջկառավարական բանակցությունների արձանագրությանը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ 19.12.2014թ. հայտագրով ծանուցված հատկացմանը,

համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Հոդված 1

1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից փոխադարձ համաձայնությամբ ընտրվելիք այլ հասցեատերերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (KfW) ստանալ հետևյալ գումարները.

   1. մինչև 500 000 եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ 2-րդ պարբերության 1-ին կետում նշված ծրագրի («Բնակտարածքի ֆինանսավորում. 4-րդ փուլ») իրականացման և համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար,

2. մինչև 403 340,85 եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ 2-րդ պարբերության 2-րդ կետում նշված ծրագրի («Էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիր միկրո, փոքր և միջին ձեռնարկություններում/ՄՓՄՁ») իրականացման և համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար,

3. մինչև 912 528,99 եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ 2-րդ պարբերության 3-րդ կետում նշված ծրագրի («Դպրոցների էներգասպառման արդյունավետությունը բարձրացնող վերանորոգում») իրականացման և համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար,

4. մինչև 2 միլիոն եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ 2-րդ պարբերության 4-րդ կետում նշված ծրագրի («Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում. 2-րդ փուլ») իրականացման և համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար,

5. մինչև 1 միլիոն եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր. 2-րդ փուլ» ծրագրի իրականացման և համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար:

2) Բացի այդ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից փոխադարձ համաձայնությամբ ընտրված վարկառուին հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալ արտոնյալ վարկեր, որոնք տրամադրվում են հանրային ոլորտում զարգացմանն ուղղված համագործակցության շրջանակում.

1. մինչև 20 միլիոն եվրո գումարի չափով՝ «Բնակտարածքի ֆինանսավորում. 4-րդ փուլ» ծրագրի համար,

2. մինչև 20 միլիոն եվրո գումարի չափով՝ «Էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիր ՄՓՄՁ-ում» ծրագրի համար,

3. մինչև 15 միլիոն եվրո գումարի չափով՝ «Դպրոցների էներգասպառման արդյունավետությունը բարձրացնող վերանորոգում» ծրագրի համար,

4. մինչև 50 միլիոն եվրո գումարի չափով՝ «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում. 2-րդ փուլ» ծրագրի համար,

5. մինչև 100 միլիոն եվրո գումարի չափով՝ «Կովկասի էներգետիկ միություն. 3-րդ փուլ (Հայաստան-Վրաստան բարձրավոլտ հոսանքահաղորդման գիծ, ենթակայաններ)» ծրագրի համար:

Վերոնշյալ ծրագրի վարկավորումն իրականացվում է, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվում է այդ ծրագրի իրագործումն օժանդակելու նպատակահարմարությունը զարգացման քաղաքականության տեսանկյունից, եթե Հայաստանի Հանրապետությունը շարունակում է պահպանել նախկին վարկային հուսալիությունը, և եթե Հայաստանի Հանրապետության Կառավարությունը պետական երաշխիք է տրամադրում այն դեպքում, երբ վարկառուն ինքը չէ: Այս ծրագիրը չի կարող փոխարինվել այլ ծրագրերով:

3) 1-ին պարբերությունում նշված ծրագրերը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև փոխադարձ համաձայնությամբ կարող են փոխարինվել այլ ծրագրերով:

4) Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանն ավելի ուշ ժամանակահատվածում հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալ լրացուցիչ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ծրագրերի նախապատրաստման, կամ լրացուցիչ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ծրագրերի իրականացմանն ու համակարգմանն անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագիրը:

5) Նախապատրաստական և հարակից միջոցառումների համար 1-ին պարբերության 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ֆինանսական օժանդակությունները փոխակերպվում են վարկերի, եթե դրանք չեն օգտագործվում այդ միջոցառումների համար:

Հոդված 2

1) 1-ին հոդվածում նշված գումարների օգտագործումը, այն պայմանները, որոնցով տրամադրվում են այդ գումարները, ինչպես նաև հանձնարարականների տրման ընթացակարգը Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող օրենսդրության համաձայն սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջև կնքվող պայմանագրերում:

2) 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված գումարների հատկացումները չեն կատարվում, եթե ամրագրված ժամկետում համապատասխան վարկային կամ ֆինանսական պայմանագրերը չեն կնքվում: 1-ին հոդվածի 1-ին պարբերության 1-ին, 4-րդ և 5-րդ և 2-րդ պարբերության 1-ին, 4-րդ, և 5-րդ կետերում նշված գումարների համար ժամկետն ավարտվում է 2021թ. դեկտեմբերի 31-ին, 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ և 2-րդ պարբերության 3-րդ կետերում նշված գումարների համար՝ 2017թ. դեկտեմբերի 31-ին, 1-ին հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետում նշված գումարի համար՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին և 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետում նշված գումարի համար՝ 2018թ. դեկտեմբերի 31-ին:

3) Եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության Կառավարությունը չէ, ապա վերջինս երաշխավորում է Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք վարկային պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

4) Եթե ֆինանսական օժանդակություններ ստացողը Հայաստանի Հանրապետության Կառավարությունը չէ, ապա վերջինս Վերականգնման վարկերի բանկին տալիս է երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է վճարել համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման ու իրականացման շրջանակներում առաջացող՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը և պետական այլ տուրքերը:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վարկի և ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային և օդային ճանապարհներով անձերի և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքողներին տալիս է տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չի ձեռնարկում միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը ծանուցում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին: Հիմք է ընդունվում ծանուցումը ստանալու օրը:

Սույն Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: ՄԱԿ-ի քարտուղարության կողմից գրանցման հաստատումից անմիջապես հետո Համաձայնագրի մյուս կողմին ՄԱԿ-ում Համաձայնագրի գրանցման համարի փոխանցմամբ ծանուցվում է կատարված գրանցման մասին:

Կատարված է Երևան քաղաքում -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝